Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Ուսուցիչների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *<<Բանավոր խոսքի զարգացումը նոր նյութի տարբեր մեթոդներով հաղորդման միջոցով>>*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *Մարտունի*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Հասմիկ Բեյբության*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *Սիդա Շահինյան*

ԴՊՐՈՑ՝ *<<Երանոսի թիվ 1 մ/դ>>*

Մարտունի-2022

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Գրական ակնարկ.....4

3. Նոր նյութի դասավանդման մոտեցումներ.....14

4.Փորձարարական հետազոտություն.....16

4.1.Խմբի նկարագիրը.....16

4.2.Փորձարարական դասեր.....16

4.2.1.Փորձարարական դաս-1.....16

4.3.2.Փորձարարական դաս-2.....17

5.Վերլուծություն.....19

6.Գրականության ցանկ.....21

7.Հավելված.....22

1.Դասապլան-1.....22

2.Դասապլան-2.....25

Ներածություն

Իմ հետազոտությունների հիմնական նպատակն է նոր նյութի տարբեր մեթոդներով հաղորդման միջոցով բանավոր խոսքի զարգացումը խթանող մոտեղումների ուսումնասիրությունը: Հետազոտականի սկզբում ներկայացնում եմ բանավոր խոսքի զարգացման հիմնական մոտեցումներին ու կարևորությանը: Այնուհետև ուսումնական գործընթացում բանավոր խոսքի հետ կապված որոշակի դժվարությունների հաղթահարման մոտեցումներնն եմ ներկայացրել: Նոր նյութի դասավանդման մոտեցումներ բաժնում ներկայացրել եմ ուսումնական նոր մոդելներ ,որոնցով առավել արդյունավետ կարող ենք զարգացնել բանավոր խոսքը:

Հետազոտական աշխատանքի հաջորդ բաժնում փորձարարական դասերն են , որոնցում կիրառված են նորարական մոտեցումներ և արդյունքում փորձում մ առավել ագույնս խթանել աշակերտների մոտբանավոր խոսքի գրագետկիրառման հմտությունները:

Յուրաքանչյուր ուսուցիչ իր մանկավարժական գործունեության ընթացքում հանդիպում է բազմաթիվ սովորողների, ովքեր դժվարություններ են ունենում ուսումնական նյութի յուրացման հարցում: Առանց բացահայտելու այս դժվարությունների պատճառները, որոնք զգալի թվով դեպքերում կրում են հոգեբանական բնույթ, անհնար է արդյունավետ աշխատել դրանք հաղթահարելու և, ի վերջո, բարելավելու դպրոցի կատարողականը:

Ըստ հոգեբանների՝ ուսուցման հետ մնալու հոգեբանական պատճառները բազմազան են և բարդ առնչության մեջ են դպրոցական դժվարությունների արտաքին դրսևորումների հետ: Եվ նրանք նշում են հետևյալը. կրթական աշխատանքի ցանկացած դժվարության հիմքում կարող են լինել տարբեր հոգեբանական պատճառներ, իսկ դժվարությունների հիմքում, որոնք տարբերվում են արտաքին դրսևորումներով, կարող են լինել մեկ և նույն հոգեբանական պատճառը: Օրինակ՝ *անզգուշությունը* կարող է լինել կամավոր ուշադրության գործընթացների ձևավորման տարբեր պատճառների, մտավոր գործունեության անբավարար զարգացման, սովորելու նկատմամբ հետաքրքրության պակասի, որևէ

խնդրի առկայության հետևանք: Անուշադրությունը կարող է կապված լինել սովորողի անհատական տիպաբանական հատկանիշների հետ (նյարդային համակարգի թուլություն), որոշ դեպքերում աշակերտի քթային շնչառության դժվարությունը կարող է հանգեցնել նաև անուշադրության:

Եվ սովորողների այնպիսի տարբեր դժվարությունների հիմքում, ինչպիսիք են վատ հիշողությունը, ուսումնական նյութում էականը առանձնացնելու անկարողությունը, թվաբանական խնդիրների լուծման դժվարությունները, կարող է լինել մեկ և նույն հոգեբանական պատճառը՝ վերլուծության չձևավորված մտավոր գործողությունը:

Ուսուցման դժվարությունների արտաքին դրսևորումների և դրանց առաջացնող պատճառների միջև նման բարդ հարաբերությունը ուսուցչի համար անհրաժեշտ է ոչ միայն լավ հասկանալ այդ կապերը, այլև դրանց արդյունավետ նույնականացման համար նա պետք է տիրապետի հատուկ հոգեախտորոշիչ մեթոդներին:

Գրական ակնարկ

Բանավոր խոսքը, բնականաբար, հանդես է եկել գրավորից վաղ՝ որ-պես հաղորդակցման անմիջական պահանջմունք: Ձևավորման սկզբնական փուլում այդ կարողության զարգացման ուղղությամբ հա-տուկ աշխատանքի կարիք չի զգացվում: Այնինչ գրավոր խոսքը յուրաց-վում է հատուկ ուսուցման ճանապարհով, որի ընթացքում ընդգծվում է բանավոր խոսքի առաջանցիկ զարգացումը: Գրավոր խոսքի ձևավո-րումն ու զարգացումը բանավորի համեմատ առավել հագեցած և բարդ գործընթաց է, իրականացվում է դանդաղորեն: Բանավոր խոսքում օգ-տագործվող նախադասություններն ավելի ընդարձակ են, նրանցում հաճախ են գործածվում զանազան խոսքային կառույցներ, որոնք բար-դացնում են նախադասությունը: Միևնույն խոսքի գրավոր տարբերա-կում հնարավոր չէ արտահայտել հոգեբանական դադարները, տրամա-բանական շեշտերը, արտասանական երանգավորումները: Եթե բանա-վոր խոսքում կարևորվում են

ուղղախոսությունն ու տարաբնույթ լեզվաարտահայտչամիջոցները, ապա գրավոր խոսքը ծանրաբեռնված է ուղղագրությամբ և կետադրությամբ:

Գոյություն ունեն որոշակի պայմաններ, որոնք անհրաժեշտ է պահ-պանել խոսքային գործունեության ժամանակ.

1. Արտահայտվելու և խոսակցին ունկնդրելու ցանկություն, այ-սինքն՝ խոսելու պահանջմունք: Առանց իր զգացմունքները, մտքերը, ձգտումներն արտահայտելու ցանկության, մարդը, բնականաբար, չէր խոսի ի սկզբանե:

Սանկության գեղգեղանքի փուլում սկսվում են ձևավորվել երեխայի զգացմունքները: Երեխան գեղգեղում է կամ թոթովում, երբ տրամադրությունը բարձր է, ուրախ է, առողջ, և ոչ մի բան նրան չի անհանգստաց-նում: Նա գեղգեղանքով արտահայտում է իր պայծառ զգացմունքները:

Տարիքի հետ աստիճանաբար զարգանում, բարդանում ու կատարե-լագործվում են երեխայի զգացմունքները, ինչպես նաև, դրանց արտա-հայտման, դրսևորման ձևերը: Երեխան սկսում է ճանաչել աշխարհը, շր-ջապատը, մարդկանց, և ծագում է իր վերաբերմունքը, զգացմունքներն արտահայտելու բուռն ցանկություն, ու նա այդ բոլորն սկսում է արտա-հայտել բառերով, բառակապակցություններով, նախադասությունն-ներով, կապակցված խոսքով: Եթե երեխայի մեջ չառաջանա արտահայտ-վելու, հաղորդակցվելու ցանկություն, նա չի խոսի, և եթե նրան չտրվի իր զգացածի, տեսածի, լսածի մասին խոսելու, արտահայտվելու հնա-րավորություն, ապա երեխայի հոգեկան և մտավոր աշխարհին լուրջ վնաս կհասցվի:

Մտնելով խոսակցության մեջ՝ յուրաքանչյուր խոսող ունենում է որո-շակի նպատակներ, մի բան հաղորդել, որևէ հարցի մասին կարծիք հայտնել, մի բան հարցնել, խնդրել և այլն: Որպես կանոն, մենք գիտենք, թե ում է ուղղված մեր խոսքը: Ունկնդիրն էլ ունի իր հիմնական մտադ-ությունը՝ տեղեկատվություն ստանալ, հասկանալ, թե ինչ է ուզում խո-սակիցը: Սակայն, դժբախտաբար, հաճախ ուսուցիչները չեն մտահոգ-վում, որ աշակերտների մեջ առաջանա հաղորդակցվելու պահանջ-մունք: Արդյունքում աշակերտը ստեղծում է խոսք, շարադրություն է գրում, որովետև այդպիսի հանձնարարություն է ստացել ուսուցչից: Այս դեպքում աշակերտը հաղորդակցման դրդապատճառ չի ունենա, որով-հետև ուսուցիչը չի

ապահովել հաղորդակցման կոնկրետ իրադրություն, և աշակերտները պարզապես կգրեն շարադրություններ կամ կպատաս-խանեն ուսուցչի հարցերին առանց ոգևորության, ապրումների, զգաց-մունքների, պարզապես կկատարեն իրենց պարտականությունները

Խոսքային գործունեությունը երկկողմանի գործընթաց է: Ուրեմն անհրաժեշտ է նաև աշակերտների մեջ նպատակասլաց կերպով մշակել ուրիշի մտքերը ընկալելու ունակություն, այսինքն՝ հանդես գալ ոչ մի-այն որպես խոսող, որևէ նյութ հաղորդող, այլև ունկնդիր, ընկալող, խոս-քի հասցեատեր:

2. Խոսելու նյութի առկայությունը: Խոսք կառուցելուց առաջ, բնա-կանաբար, պիտի մտածել խոսելու նյութի մասին՝ նկատի ունենալով, որ որքան այն ընդարձակ է ու հարուստ, փաստերը՝ արժեքավոր ու հիմ-նավոր, այնքան խոսքը բովանդակալից է, հետաքրքիր և ուշագրավ:

Աշակերտների կառուցած խոսքի հստակությունը, տրամաբանու-թյունը, հարստությունը, բովանդակայնությունը պայմանավորված են նյութի նախապատրաստվածությամբ: Հետևաբար, սովորողների խոսքի զարգացման գործընթացի գլխավոր մեթոդական պայմանը խոսքային վարժությունների (պատմում, շարադրություն և այլն) անցկացումն է, անհրաժեշտ նյութի փութաջանորեն հավաքումը, մշակումն ու շարադ-րելուն նախապաստրաստումը:

3. Խոսքի ընդունված կանոններով աշակերտներին զինելը գրա-գետ, արտահատիչ և բովանդակային խոսք կառուցելու գլխավոր պայմանն է: Լեզվական միջոցների, խոսք կառուցելու կանոնների յու-րացման նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է երեխաներին տալ խոսքի օրինակելի նմուշներ, ինչպես նաև նրանց համար ստեղծել բա-րենպաստ խոսքային միջավայր: Օրինակելի խոսքի ունկնդրումը և խոսքային կաղապարների՝ սեփական պրակտիկայում օգագործումը երեխայի մեջ ձևավորում են «լեզվական զգացողություն»:

4. Հասկանալ այն ամենը, ինչի մասին խոսում ես, ընկալել խոսքի տրամաբանությունը, հերոսների բնավորությունն ու գործելակերպի նր-բությունները: Առանց խոսելու նյութի ըստ ամենայնի հասկացման հնա-րավոր չէ կառուցել բովանդակային խոսք, ապահովել խոսքի արտա-հայտչականությունը:

5. Տարբերել գործող անձերի տրամադրությունը և այն ներկա-յացնել ոչ միայն ձայնային միջոցներով, այլև օգտագործել լեզվական արտահայտչական միջոցներ՝ թվարկման, կրկնության, շեշտման, ընդգծման, հակադրման, մտքի ավարտը ընդգծող արտասանական տարբեր երանգավորումներ:

6. Խոսելիս ուշադրությամբ հետևել, թե ինչպես են մարդիկ քեզ լսում, հասկանո՞ւմ են արդյոք քեզ, հետաքրքի՞ր է քո խոսքը, չե՞ն ձանձ-րանում արդյոք ունկնդիրները, չի՞ ցրվել նրանց ուշադրությունը, և նշվածներից որևէ մեկի հայտնաբերման դեպքում անմիջապես որոնել դրանց կանխման հնարները:

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Յուրաքանչյուր առարկայի դասավանդման մեթոդիկա հենվում է դիդակտիկայում մշակված ավանդական մեթոդների վրա, որոնք դասակարգվում են՝ հիմք ընդունելով դրանց իրականացման ժամանակ օգտագործվող միջոցները, զննականությունը, բառը, խոսքը և սովորողների գործունեությունը: Ուսուցման մեթոդներն ավանդաբար բաժանվում են 3 խմբի՝ զննական, խոսքային և գործնական, որոնք հիմնականում հանդես են գալիս փոխկապակցված:

Զննական մեթոդները տարրական դպրոցում հաճախակի են օգտագործվում, ընդ որում կիրառվում են ավելի շատ դիտման մեթոդը և նրա տարատեսակները: Կիրառվում է մասնավորապես իրազննությու-նը (խաղալիքներ, նկարներ, լուսանկարնե/ւի դիտում, առարկաների նկարագրում, դիդակտիկ խաղեր, նկարների շուրջ պատմումներ և այլն), որն օգտագործվում է գիտելիքների ամրակայման, բառապաշա-րի հարստացման, կապակցված խոսքի զարգացման նպատակներով:

Խոսքային մեթոդները տարրական դպրոցում նույնպես լայն կիրառություն ունեն, գեղարվեստական ստեղծագործությունների ըն-թերցումն ու պատմումը, արձակ և չափածո ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը և այլն:

Խոսքային բոլոր մե-թոդների ժամանակ, անշուշտ, կարելի է օգտագործել նաե դիտողական պարագաներ:

Գործնական մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ձեռք բերած գիտելիքների կիրառմանը, խոսքային ունակությունների ու կա-րողությունների կիրառման կատարելագործմանը: Գործնական մեթոդ-ների թվին են պատկանում տարաբնույթ խոսքային վարժությունները, լեզվական խաղերը, խաղ-բեմականացումները և այլն:

Տարրական դասարաններում կիրառելի են նաև վերարտադրողական և ստեղծագործական մեթոդները:

Վերարտադրողական մեթոդներից են նկարների դիտումները և դրանց բովանդակության վերարտադրումը, գեղարվեստական ստեղ-ծագործությունների ընթերցումը և պատմումը, տարաբնույթ նյութերի անգիր ուսուցումը, գրական ստեղծագործությունների բովանդակու-թյան հիման վրա իրականացվող խաղ-բեմականացումները, դիդակ-տիկ խաղերը և այլն: Սրանց օգտագործման ժամանակ երեխաները խոսքային նմուշի հիման վրա յուրացնում են որոշակի բառապաշար, խոսքային կառույցներ, դարձվածքներ, ընդօրինակում են պատրաստի խոսքը և այլն:

Ստեղծագործական մեթոդները նպաստում են կապակցված խոսքա-յին արտահայտություններ կառուցելու կարողության ձևավորմանը, աշա-կերտը ոչ թե վերարտադրում է իրեն հայտնի լեզվական միավորները, այլ ստեղծում նոր համակցումներ՝ առաջնորդվելով հաղորդակցման իրադ-րության պահանջներով առանձնահատկություններով: Ստեղծագործա-կան մեթոդներից են ամփոփիչ զրույցները, ընթերցածի ստեղծագոր-ծաբար վերարտադրումը, բնագրի ձևափոխված պատմումը, իրադրությունային խաղերն ու երկխոսությունները և այլն:

Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները մայրենիի դասերի ժամանակ իրականացվում են ինչպես դասագրքերի մեթո-դական կառույցում տրված հարցերի ու առաջադրանքների, այնպես էլ հատուկ նպատակով տրված իրադրությունային մենախոսությունների ու երկխոսությունների միջոցով: Այդ բոլոր հնարներն ի վերջո իրականացվում են.

Ակտիվ մեթոդներով.

- Դերային խաղեր: Դերային խաղերի իրականացման ժամանակ աշակերտներին առաջարկվում է տարբեր ստեղծագործություննե-րից կամ այլ իրադրություններից ընտրել զանազան դերեր, խաղալ կարճ խոսքային դրվագներ, որպես կանոն՝ պրոբլեմային:

- Դասարանային շրջան: Ամբողջ դասարանով որևէ խնդիր քննար-կելիս շահեկան է նստել շրջանով, որը կօգնի աշակերտներին ան-կաշկանդ, սրտաբաց և համարձակ արտահայտել իրենց մտքերը: Այսպիսի պայմաններում կստեղծվի անմիջական մթնոլորտ, և աշա-կերտները համարձակ կզրուցեն, կընդհատեն իրար, կհակադրվեն՝ նայելով իրար երեսի, իրար աչքերի մեջ, կնկատեն միմյանց դիմա-խաղերը, ժեստերը և դրանով էլ ավելի կներքաշվեն խոսակցու-թյան, բանավեճի, զրույցի մեջ:

- Ստեղծագործական օրագրի վարում: Օրագրի վարումը ուսում-նական գործընթացում թե աշակերտների, թե ուսուցչի համար գոր-ծունեության նոր ձև է: Այս հնարն աշակերտներին կօգնի.

  - անկեղծորեն և անմիջական կերպով արտահայտել իրենց զգացմունքներն ու մտքերը (գրավոր),

  - ավելի հստակորեն պատկերացնել սեփական ստեղծագործական կարողությունների մակարդակը և աշխատել դրանց զար-գացման ուղղությամբ, որոշել անձնային այն որակները, որոնք ցանկանում են սերմանել իրենց մեջ, խոսել այդ մասին և դրանք իրականացնել,

  - սովորել խոսքային միջոցներով վերլուծել ինչպես ուրիշների, այնպես էլ սեփական արարքները, կատարել դատողություններ,

  - –զարգացնել ու բարելավել իր և ուրիշների հարաբերությունն-ը՝ օգտագործելով բարեկիրթ խոսքի հնարներ:

2. Բանավեճեր, հարցազրույցներ:

Տարրական դասարաններում մայրենի լեզ-վի (և ոչ միայն) դասերին պետք է խուսափել տեսական կանոնների և սահմանումների, քերականական իրողությունների բերանացի շարադ-րումից, առարկություն չընդունող դատողություններից, որոնք աշակեր-տից պահանջում են միայն լսել, ընկալել և նույնությամբ վերարտադրել:

Բանավեճերի, հարցազրույցների, տարաբնույթ երկխոսությունների կազմակերպումն ինչպես դասագրքի, այնպես էլ սեփական ստեղծագործական զինանոցի միջոցներով, ուսուցչի վարպետության և նրա՝ աշակերտներին դատողությունների մղելու, այդ կարողությունը զար-գացնելու ունակությունների դրսևորումն է:

Փոքր խմբերով աշխատանք:

Առաջադրանքները հանձնարարվում են ոչ թե ամբողջ դասարանին, այլ նախապես ձևավորված առանձին խմբերի (միայն տվյալ առաջադ-րանքի կատարման համար):

Ուսուցման բոլոր մեթոդների կիրառման ժամանակ էլ որպես խոսքը հարստացնելու զգացմունքային հնարներ հանդես են գալիս բանաս-տեղծությունը, երգ-երաժշտությունը, նկարչությունը, դիտումները, հանդիպումները, ցերեկույթները, էքսկուրսիաները և այլն:

Անհրաժեշտ է, որքան հնարավոր է վաղ սկսել աշխատանքն այս ուղղու-թյամբ, հասնել նրան, որ աշակերտները գիտակցեն, թե յուրաքանչյուր մար-դու կյանքում որքան կարևոր են որևէ լուր հաղորդելու, զրուցելու, խոսքա-յին շփումներ ստեղծելու, հետաքրքիր պատմելու, հումորով խոսելու, որևէ առիթով ջերմ խոսքեր ասելու կամ գրելու, վեճի ժամանակ խոսքով պաշտ-պանվելու կամ վեճը խոսքով վարպետորեն հարթելու կարողությունները:

ԿԱՊԱԿՑՎԱՏ ԽՈՍՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բարեկիրթ խոսքի մշակույթը ոչ միայն ճիշտ, գրական լեզվի չափա-նիշներին համապատասխան մակարդակով խոսելու և գրելու կարողու-թյունն է, այլն գեղեցիկ, ներգործուն, տպավորիչ հաղորդակցվելու ու-նակությունը՝ հաշվի առնելով խոսակցին, խոսակցության նպատակը, վայրը և այլն:

Կապակցված խոսքին ներկայացվում են հետևյալ պահանջները,

ա) խոսելու նյութի մասին գիտելիքների, տեղեկությունների առկա-յությունը,

բ) խոսքի կառուցվածքի պարզությունը, մտքերի հետևողականու-թյունն ու հստակությունը,

գ) թեմայի բացահայտման տրամաբանությունը,

դ) խոսքի բառամթերքի ճիշտ ընտրությունը և դիպուկությունը,

ե) արտահայտչամիջոցների ճիշտ ընտրությունը,

զ) խոսակցի անձի առանձնահատկությունների հաշվառումը (տարի-քը, սեռը, կարգավիճակը և այլն),

է) տվյալ լեզվի գրական նորմերին համապատասխանությունը:

Խոսքի որոկական հատկանիշներն են բովանդակայնությունը, ճշգրտությունը, տրամաբանությունը, հարստությունը, արտա-հայտչականությունը, պարզությունը, ճշտությունը:

Խոսքը բովանդակային է, եթե խոսողը կամ գրողը իրենց խոսացածի ու գրածի մասին ունեն որոշակի գիտելիքներ, տեղեկատվություն և դրանք ներկայացնում են ճշգրտորեն, տեղին և լիարժեք կերպով՝ խոսքը կառուցելով ոչ միայն փաստերի, դիտումների, համոզմունքների վրա, այլն ավարտուն են և ամբողջական:

Խոսքի տրամաբանությունը: Կապակցված խոսքում պետք է պահ-պանվի մտքերի և դեպքերի հաջորդականությունը, եզրակացություն-ները, դատողությունները պետք է լինեն հիմնավորված:

Խոսքը ճշգրիտ է ինչպես իրականությանը համապատասխան փաս-տերի, դիտումների, զգացմունքների ճշգրիտ հաղորդման, այնպես էլ բառերի, բառակապակցությունների, դարձվածքների, նախադասու-թյունների դիպուկ ընտրության դեպքում:

Խոսքի հարստությունը պայմանավորված է թեմայի վերաբերյալ խոսողի ունեցած տեղեկատվությամբ, հոմանիշների, հականիշների, դիպուկ արտահայտությունների, առածների և ասացվածքների գործա-ծությամբ, խոսքի բովանդակությունը տարբեր իրադրություններում լա-վագույն կերպով հաղորդող զանազան կառուցվածք ունեցող նախա-դասություններով:

Խոսքի պարզությունը նրա մատչելիությունն է ունկնդրի կամ ըն-թերցողի համար, նրա կողմնորոշումը դեպի որոշակի հասցեատիրոջ, խոսողը կամ գրողը հաշվի պետք է առնի խոսքի նպատակը, վայրը, ունկնդրի կամ ընթերցողի տարիքը, սեռը, դիրքը, հնարավորություննե-րը, հետաքրքրությունները և այլ պայմաններ: Պետք է նկատի ունենալ, որ խոսքի խառնաշփոթությունը, նախադասությունների շարահյուսա-կան ծայրահեղ բարդությունը, ծանրաբեռնումը մեջբերումներով, ան-վանումներով, թվերով, անհարկի հոմանիշներով, ավելորդ կրկնություն-ներով ե մանրամասներով, «պաճուճանքով», մակաբույծ բառերով այն դարձնում են խրթին, անհասկանալի, ունկնդրման համար՝ տհաճ:

Խոսքի արտահայտչականությունը խոսքի որակական հատկանիշ է (մասնավորապես՝ բանավոր), որը ենթադրում է առավելագույն ազդե-ցություն ունկնդրի վրա: Բանավոր խոսքն ունկնդրի վրա ազդում է տա-րաբնույթ արտահայտչամիջոցներով, ընդհանուր մտքերի տրամաբա-նությամբ, նպատակահարմար փաստերի շարադրմամբ, անհրաժեշտ բառապաշարի ընտրությամբ, դարձվածքներով, իսկ գրավոր խոսքը՝ նաև առոգանության նշաններով ու կետադրությամբ:

Խոսքի ճշտությունը, գրավոր խոսքի համար պահանջվում է քերա-կանական, ուղղագրական և կետադրական, իսկ բանավոր խոսքի հա-մար՝ նաև ուղղախոսական կանոնների պահպանում:

Թվարկված հատկանիշները սերտորեն փոխշաղկապված են և ու-սումնական գործընթացում դրանց ուսուցումն իրականացվում է համա-ձույլ:

Խոսքային գործունեության մեջ կարևոր դեր ունի նաև հաղոր-դակցման ոճը:

Պայմանականորեն առանձնանում են հաղորդակցման ոճի 5 տեսակ և դրանց համապատասխան՝ խոսքի հինգ ոճ.

- խոսակցական ոճն օգտագործվում է առօրեական-կենցաղային ոլորտում հաղորդակցվելիս,
- գիտական ոճը՝ գիտության ե տեխնիկայի բնագավառում,
- գործնական ոճը՝ պաշտոնական-գործնական հարաբերություն-ների ժամանակ,
- հրապարակային ոճը՝ հասարակական-քաղաքական պրակտի-կայում,
- գեղարվեստական ոճը՝ արվեստում[1]:

Այս ոճերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են հաղորդակցման տեսակով:

Հաղորդակցման իրադրության այս կամ այն ոճն արտահայտման ձևերի առջև, բնականաբար, դնում է որոշակի պահանջներ՝ ինչպես բովանդակու-թյան, այնպես էլ լեզվական միջոցների ընտրության առումով:

Երեխաների խոսքային կարողությունների ձևավորումը պետք է կա-պել խոսքի կոնկրետ ոճի զարգացման հետ՝ զարգացնելով ոչ թե խոսքն «ընդհանրապես», այլ խոսքի այս կամ այն տեսակը, ոճը՝ խոսակցա-կան, գիտական, գեղարվեստական և այլն:

Կրտսեր դպրոցականների խոսքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանք ինչպես առօրյայում, այնպես էլ ուսումնական գոր-ծընթացում ավելի շատ օգտագործում են խոսակցական, գիտագործ-նական և գեղարվեստական ոճեր: Այդ իսկ պատճառով տարրական դա-սարանների համար անհրաժեշտ է ընտրել նրանց

խոսքային պրակտիկայում գործածական (այդ տարիքին հարմար) ոճեր, խոսակցական, գիտագործնական (գիտականի և պաշտոնական-գործնականի մի-ջինը) և գեղարվեստական:

Նոր նյութի դասավանդման մոտեցումներ

Գոյություն ունեն դասավադման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում են երեք խմբի .

1. Պասիվ Այստեղ աշակերտը ուսումնառության «օբյեկտ» է, որը պետք է յուրացնի և վերարտադրի ուսուցչի փոխանցած նյութը: Հիմնականում կիրառվում է դասախասության մեթոդը, պատմելով նոր նյութը ներկայացնելու ռազմավարությունը: Այս դեպքում հմտությունների զարգացումը առաջնային նպատակ չէ, առաջնային է ինֆորմացիայի սերտումը:

2. Ակտիվ Այստեղ աշակերտը ուսումնառության «սուբյեկտ» է և կատարում է ստեղծագործ առաջադրանքներ:

3. Փոխներգործուն Աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ ներազդման միջոցով զարգանում է աշակերտի անհատականությունը, թիմով աշխատելու հմտությունները, վերլուծականությունը և այլն: Ուսուցիչը ուղղորդող է, գործընթացի կազմակերպիչ, աշակերտը հետազոտող է, ուսումնասիրող և պրպտող:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարեւոր է ոչ միայն ուսուցման համար, այլեւ այսօր համարվում է մարդու կյանքի կարեւորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա:

Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետեւաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլեւս պարապ չեն:

Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաեւ

սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Ուստի որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր եւ շարունակական ձեւով: Այլ կերպ ասած՝ պետք է կարեւորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլեւ խորությունը:

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Երանոսի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին: Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել բանավոր խոսքի զարգացումը խթանող նոր մեթոդներ, ինչը կնպաստի նաև զարգացնել նրանց մոտ տեքստերի հետ ճիշտ աշխատելու հմտությունները, դառնալ ավելի ինքնուրույն և հետ չմնալ ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում են 20 աշակերտ՝ 8 աղջիկ և 12 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Ռուսաց լեզու անցնում են շաբաթական 2 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 5-րդ կամ 2-րդ ժամերին: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների բանավոր խոսքի զարգացումը :

Փորձարարական դաս-1

Առաջին թեման , որ ընտրել եմ 5-րդ դասարանի դասագրքից <Наша семья> թեման է , որի համար իմ հիմնական նպատակներից է բառապաշարի և բանավոր խոսքի զարգացումը, ընտանիքի մասին սեփական միտք ձևավորելը և արտահայտելը: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները ՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ:

Դասի սկզբում ընտանիքի վերաբերյալ երգ միացրեցի և աշակերտներին հանձնարարեցի ուշադրություն դարձնել՝ ինչի մասին է երգը: Բանավոր խոսքի միջոցով կարծիքներ փոխանակեցինք ընտանիքի վերաբերյալ: Նոր նյութի ներկայացման փուլում գրատախտակին փակցնում եմ ընտանիքի անդամների նկարներ: Հարցերի միջոցով ուղղորդում և բացատրում եմ աշակերտներին նոր հասկացությունները: Հաջորդ քայլով փակցվում եմ ընտանիքի անդամների իրավիճակային նկարներ (օգնություն, հոգատարություն և այլն), աշակերտները փորձում են բայով արտահայտել նկարի իրավիճակը: Զուգահեռ գրում է նոր բառերը գրատախտակին: Վերջում հրահանգում եմ կիրառելով նոր բառերը փորձում է տալ ընտանիքի բնորոշումը: Գործնական աշխատանքի համար տեքստն ընթերցում եմ և հատված-հատված ավարտելուց հետո աշակերտները զույգերով հարցեր են տալիս միմյանց:Այնուհետև հանձնարարում եմ նոր ուսումնասիրած բառերով կազմել 2 նախադասություն և շրջելով դասարանում ստուգում եմ բոլոր զույգերի կատարած աշխատանքը: Դասի ամփոփում ենք կատարում այնուհետև առավել շատ բանավոր սահուն խոսք ունեցող աշակերտներին գնահատում եմ :

Այնուհետև հանձնարարում եմ տնային աշխատանք՝ շարադրություն «Моя семья» թեմայով:

Փորձարարական դաս-2

Առաջին թեման , որ ընտրել եմ 5-րդ դասարանի դասագրքից < Одушевленные и неодушевленные существительные> թեման է , որի համար իմ հիմնական նպատակներից է բառապաշարի և բանավոր խոսքի զարգացումը, ընտանիքի մասին սեփական միտք ձևավորելը և արտահայտելը: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները ՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ:

Դասը սկսվեց տսահոլովակի ցուցադրությամբ , որտեղ անշունչ առարկաները շնչավոր են և կատարում են մարդկանց բնորոշ գործողություններ: Հոլովակը նայելուց հետո աշակերտներին հարցնում եմ արդյո՞ք իրական կյանքում օրինակ՝ աթոռը կարող է խոսել: Կատարում ենք քննարկում:

Խթանման փուլից հետո սահուն անցում է կատարվում նոր նյութի ներկայացմանը: Դասարանը բաժանում եմ հինգ խմբի՝ կախված աշակերտների քանակից, յուրաքանչյուր խմբին տրվում է անշունչ և շնչավոր տասը նկար: Յուրաքանչյուր խումբ փակցնում է գրատախտակի իրենց բաժնում առկա սյունակի ճիշտ մասում: Վերջում փորձում ենք վեր հանել այն սկզբունքը, որով բաժանվել են առարկաները և յուաքանչյուր սյունակի վերևում նշում է համապատասխան հարցը՝ Ով/ Ինչ: Գործնական փուլում գրատախտակին հերթով փակցվում են նկարներ, որտեղ պատկերված են տարբեր գործողություններ շնչավոր և անշունչ առարկաների մասկանցությամբ: Աշակերտները նկարների հիման վրա բանավոր կազմում են հարցական նախադասություններ և անհատապես լսում եմ մի քանիսին: Ինքնուրույն աշխատանքի համար յուրաքանչյուր աշակերտին տրվում է հինգ-յոթ բառ, որոնց դիմաց նրանք պետք է գրեն համապատասխան հարցը՝ բաժանելով շնչավոր և անշունչ գոյականների: Այնուհետև ընդհանուր ամփոփում և տնային աշխատանքի հանձնարարություն:

Վերլուծություն

Առաջին դասի ընթացքում իմ հետազատոտության առանցքում նոր նյութի մեթոդների կիրառմամբ բանավոր խոսքի զարգացումն է: Խթանման փուլը ի սկզբանե աշակերտներին ներգրավեց դասին և հետաքրքրեց բոլորին: Նոր նյութի

պատկերավոր ներկայացումը նոր դասը ավելի ընկալելի դարձրեց աշակերտների համար և աշակերտները պասիվ լսողի դերում չէին, նրանք էին դասի գլխավոր դերակատարները: Սակայն աշակերտների մեծ քանակի դեպքում տեղի է ունենում քանակի և հատկացված ժամանակի անհամապատասխանություն, կարևոր է, որ ուսուցիչն հրահանգները ձևակերպի հստակ և ձևավորվի դասարանային մշակույթ՝ տեղից չբղավելու, իրար չընդհատելու և իրար լսելու:

Ուսուցչի ուղղորդմամբ ընթերցվեց տեքստը և դասարանի 70% կարողացավ տեսքտի բովանդակությունը հասկանալով կատարել հարց-պատասխան առաջադրանքը: Ավելի նպատակահարմար կլիներ, որ աշակերտները իրենց կազմած նախադասությունները ներկայացնեին և ստանային մեկնաբանություններ, սակայն աշակերտների քանակը խոչընդոտ է հանդիսանում նաև այս փուլում:

Երկրորդ դասի համար ընտրված թեման նույնպես պատահական չէր: Թեման ընտրել էի խթանելու աշակերտների իմացությունը շնչավոր և անշունչների տարբերակելու և բանավոր խոսքի զարգացման համար:

Խթանման փուլը հանելուկ է հանդիսանում աշակերտների համար և ի սկզբանե հետաքրքրում է նույնիսկ պասիվ աշակերտներին: Արդյունքում մտածում և միտքը բարձրաձայնում են նույնիսկ դասերին քիչ մասնակցություն ունեցող աշակերտները: Նոր նյութը ներկայացվեց առանց նոր դասը պատմելու, ուսուցչի ուղղորդմամբ և աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Աշակերտները աշխատում էին խմբերով, այսպիսով լուծվում է դասարանի հիմնական խոչընդոտը՝ աշակերտների մեծ քանակը: Խմբային աշխատանքը նպաստում է, որ աշակերտների 80% ակտիվ մասնակցությամբ ընկալեց դասի հիմնական հասկացությունները: Ակտիվ աշակերտների ոգևորությունն ու ակտիվությունը նաև խանգարում էր ավելի պասիվ աշակերտներին հասցնել նրանց համընթաց նյութը ընկալել

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով

6 բանավոր խոսքի խրախուսում :

Մանկավարժների ու հոգեբանների մեծամասնությունը համակարծիք է, որ նոր նյութի փոխներգործուն մեթոդով ներկայացումը բանավոր խոսքի կիրառմամբ գիտելիքը դարձնում է երկարաժամկետ և օգնում է աշակերտին անմիջապես զգալ նոր ինֆորմացիայի կիրառականությունը: Այս պնդումը մենք փորձեցինք փաստարկել նաև մեր դասերի ընթացքում նոր ինտերակտիվ մեթոդներ կիրառելով և ունեցանք հաջողված, հետաքրքիր և աշակերտակենտրոն դասեր:

Գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,, Մանկավարժ 2005

2.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ <<Անգլերեն լեզու>> 2007

3.Зинудин Абасович Абасов ,, Дифференциация обучения : сущность и формы,, Журнал директор школи 2004

4.Зарецкий В. К. ,,Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии,, ИПИ, Москва

5.Климова Н. В. Учитель информатики и ИКТ МОУ <<Шверцвбская СОШ>> ,,Дифференцированный подход в обучении информатике,, 2009

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Աիդա Շահինյան

Առարկա՝	**ռ. լեզու**	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	**I**	**Դասարան**	V
Թեմա՝	Наша семья						
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան Ընտանիքի անդամների պատկերներ,***						
Դասի նպատակը՝	**Բառապաշարի և բանավոր խոսքի զարգացում,** **Ընտանիքի անդամների ներկայացումը ռուսերենով** **Շարադրել ընտանիքի մասին սեփական միտքը գրավոր** **Փոխանցել աշակերտներին ընտանիքում հոգատարության և սիրո կարևորությունը**						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	**Աշակարետները կիմանան ընտանիքին վերաբերող նոր բառեր և բառակապկցություններ** **Կկարողանան հակիրճ շարադրել իրենց միտքը բանավոր և գրավոր** **Կկարևորեն սերն ու հոգատարությունը ընտանիքում**						
Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***		**Հարցադրումներ**	**Կիրառվողմեթոդ(ներ)**		

4րոպե-սկիզբ **խթանում** **20րոպե-ընթացք** **նոր նյութի ներկայացում**	**Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:Ներկայացնել տնային աշխատանքները** **Պատասխանել հարցերին** *Տալ ընտանիքի գաղափարը:* *Նկարագրել իրենց ընտանիքը:*	**Ողջունել դասարանին, ն/բ:Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը** **Ընտանիքի վերաբերյալ երգ է միանում և աշակերտներին հանձնարարվում է ուշադրություն դարձնել՝ ինչի մասին է երգը:** **Գրատախտակին փակցվում են ընտանիքի անդամների նկարներ** **Հարցերի միջոցով ուղղորդում և բացատրում է աշակերտներին նոր հասկացությունները:** **Հաջորդ քայլով փակցվում են ընտանիքի անդամների իրավիճակային նկարներ (օգնություն, հոգատարություն և այլն), աշակերտները փորձում են բայով արտահայտել նկարի իրավիճակը:** **Ուսուցիչը զուգահեռ**	*Ինչի՞ մասին է երգը:* *Ինչ է ընտանիքը:* *Ինչպիսին է քո ընտանիքը:* *Նկարում ինչպիսի իրավիճակներ են պատկերված:*	***Հարցադրումների մեթոդ***

գործնական /13րոպե/ **ինքնուրույն /5րոպե/** **Դասի ավարտ/3 րոպե/**	**դասի բանալի հասկացություններ ի ամփոփում,** ***Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ***	**գրում է նոր բառերը գրատախտակին: Վերջում ուսուցիչը հրահանգում է՝ կիրառելով նոր բառերը փորձել տալ ընտանիքի բնորոշումը:** **Տեքստն ընթերցում է ուսուցիչը և հատված-հատված ավարտելուց հետո աշակերտները զույգերով հարցեր են տալիս միմյանց:** **Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումնե** **Հանձնարարվում է 2 նախադասություն կազմել նոր բառերի կիրառմամբ: Ուսուցչը շրջում է և ստուգում յուրաքնաչյուրի աշխատանքը:** **Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում**		***դասի բանալի հասկացությունն երի ամփոփում,*** ***Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու, մշակույթ)***
Տնային աշխատանք	***Շարադրություն «Моя семья» /տնային աշխատանք/***			

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Աիդա Շահինյան

Առարկա՝	**ռ. լեզու**	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	**I**	**Դասարան**	V
Թեմա՝	Одушевленные и неодушевленные существительные						
Օգտագործվող նյութեր՝	***Նկարներ, Համակարգիչ, Պրոյեկտոր, Թղթերի վրա նախապես գրված բառեր***						
Դասի նպատակը՝	**Բառապաշարի և բանավոր խոսքի զարգացում,** **Տարբերակել շնչավոր և անշունչ գոյականները** **Տարբերել շնչավոր գոյականներին տրվող «Кто?» հարցը անշունչներին տրվող «Что?» հարցից** **Համեմատեն ռուսերենի և հայերենի միջև առկա որոշակի տարբերությունները**						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	**Աշակարետները կտարբերեն շնչավոր և անշունչ գոյականները և դրանց տրվող համապատասխան հարցերը** **Կհամեմատեն հայերենի «Ո՞վ» հարցի և ռուսերենի «Кто?» հարցի տարբերությունները** **Կկարողանան տեսքտի միջից առանձնացնել շնչավոր և անշունչ գոյականները և տալ համապատասխան հարցեը թե գրավոր և թե բանավոր**						
Գործողություններ(ժամ/տևողություն	**Ուսումնական գործունեություն**	**Ուսումնական գործունեություն**		**Հարցադրումնե**	**Կիրառվողմեթոդ**		

ն)	*Աշակերտներ*	*Ուսուցիչ*	ր	(ներ)
4րոպե-սկիզբ **խթանում**

գործնական /11րոպե/ **ինքնուրույն /7րոպե/** **Դասի ավարտ/3 րոպե/**	***առանձնացնել և բաժանել շնչավոր և անշունչի:տալ հարցերը:***	**մասում: Վերջում ուսուցիչը փորձում է վեր հանել այն սկզբունքը, որով բաժանվել են առարկաները և յուաքանչյուր սյունակի վերևում նշում է համապատասխան հարցը՝ Ով/ Ինչ:** **Գրատախտակին հերթով փակցվում են նկարներ, որտեղ պատկերված են տարբեր գործողություններ շնչավոր և անշունչ առարկաների մասկանցությամբ: Աշակերտները նկարների հիման վրա բանավոր կազմում են հարցական նախադասություններ և ուսուցիչը անհատապես լսում է մի քանիսին:** **Յուրաքանչյուր աշակերտին տրվում է հինգ-յոթ բառ, որոնց դիմաց նրանք պետք է**	*Կազմեք հարցական նախադասություններ շնչավոր և անշունչ առարմանների մասնակցությամբ:*	***դասի բանալի հասկացությունների ամփոփում,*** ***Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայակ***

		գրեն համապատասխան հարցը՝ բաժանելով շնչավոր և անշունչ գոյականների: **Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում**		***ան կապ(հայոց լեզու, մշակույթ)***
Տնային աշխատանք	***Դասի վերջում գտնվող 2-րդ առաջադրանքը:***			